

ԱՊՐԲԵՋԱՆԻ 2014 Թ. ԱԶԳԱՅԻՆ ԱՏԼԱՍԻ
«ՊԱՏՄԱԿԱՆ» ՔԱՐՏԵԶՆԵՐԻ
ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԵՎ

«ԱՐԵՎՄՏՅԱՆ ԱՊՐԲԵՋԱՆ»
ՀՈՐԻՆՎԱԾ ԵԶՐՈՒՅԹԸ



A CARTOGRAPHIC EXAMINATION OF
“HISTORICAL” MAPS
IN THE NATIONAL ATLAS OF AZERBAIJAN, 2014
AND
THE INVENTED TERMINOLOGY OF
“WESTERN AZERBAIJAN”

ՌՈՒԲԵՆ ԳԱԼԻՉԻԱՆ

ROUBEN GALICHIAN

ՌՈՒԲԵՆ ԳԱԼՉՅԱՆ

**ԱԴՐԲԵՋԱՆԻ 2014 Թ. ԱԶԳԱՅԻՆ ԱՏԼԱՍԻ
«ՊԱՏՄԱԿԱՆ» ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

և

**«ԱՐԵՎՄՏՅԱՆ ԱԴՐԲԵՋԱՆ»
ՀՈՐԻՆՎԱԾ ԵԶՐՈՒՅԹԸ**



Անտարես

Երևան - 2024

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ
«Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամ

**Գիրքը տպագրվել է
«ԳԵՂԱՐԴ» գիտավերլուծական հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ**

Պատասխանատու խմբագիր՝
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյան

ԱԴՐԲԵՋԱՆԻ 2014 Թ. ԱԶԳԱՅԻՆ ԱՏԼԱՍԻ «ՊԱՏՄԱԿԱՆ» ՔԱՐՏԵԶՆԵՐԻ
ՔՆՆՈՒԹՅՈՒՆ: «ԱՐԵՎՄՏՅԱՆ ԱԴՐԲԵՋԱՆ» ՀՈՐԻՆՎԱԾ ԵԶՐՈՒՅԹԸ /
Ռ. Գալչյան.– Երևան, Անտարես, 2024.– 104 էջ:

Գրքում զետեղված է երկու հոդված՝ կապված Ադրբեջանի քարտեզագրական զեղծարարությունների հետ: Առաջին հոդվածը վերաբերում է Ադրբեջանում 2014 թ. Ազգային ավիասում օդար քարտեզագրությունների կողմից կեղծված քարտեզների քննարկմանը՝ դրանք դիտարկված բնօրինակների հետ: Երկրորդ հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետության տարածքն Արևմտյան Ադրբեջան ներկայացնող ադրբեջանական կեղծարարության բացահայտմանը:

Գիրքը օգտակար է Ադրբեջանի և Հայաստանի աշխարհագրությունը, պատմությունը, քարտեզագրությունը, քաղաքական աշխարհագրությունը ուսումնասիրողների համար:

ISBN 978-9939-98-204-5

Կազմի ձևավորումը՝ **Լիլիթ Խաչատրյանի**

Կազմի քարտեզը՝ Աշխարհացոյց, World map known as Ravenna map, sixth century.
Die Ältesten Weltkarten, Konrad Miller, Rot'sche Verlag, Stuttgart, 1898, Մատենադարան, Երևան

**A CARTOGRAPHIC EXAMINATION OF
“HISTORICAL” MAPS
IN THE NATIONAL ATLAS OF AZERBAIJAN, 2014**

and

**THE INVENTED TERMINOLOGY OF
“WESTERN AZERBAIJAN”**

Rouben Galichian
Hon. Dr. NAS Armenia



Antares

Yerevan – 2024

*Published with the approval of the Scientific Council of the Institute of
History of National Academy of Sciences of the Republic of Armenia*

INSTITUTE OF HISTORY OF NAS RA
“GEGHARD” SCIENTIFIC ANALYTICAL FOUNDATION

**The book was published with the financial support of the
“GEGHARD” scientific analytical foundation.**

Chief Editor - Dr. Ashot Melkonyan
Member of the National Academy of Sciences, Republic of Armenia.

A CARTOGRAPHIC EXAMINATION OF “HISTORICAL” MAPS IN THE NATIONAL ATLAS OF
AZERBAIJAN, 2014. THE INVENTED TERMINOLOGY OF “WESTERN AZERBAIJAN” /
R. Galichian.– Yerevan, Antares, 2024.– 104 pages.

The book contains two articles, both of which related to the cartographic manipulations of Azerbaijan. The first article discusses the forged maps of foreign cartographers of up to the 20th century, reprinted in the National Atlas of Azerbaijan published in 2014. Here the original maps are discussed and compared with the falsified ones. The second article focuses on how Azerbaijan ignoring international cartography issues the claim that the territory of Republic of Armenia is Western Azerbaijan.

The book can be useful for Armenologists and Orientalists, as well as for those who study the geography, history, cartography, political geography of Azerbaijan and Armenia.

ISBN 978-9939-98-204-5

Cover design by **Lilit Khachatryan**

Cover map – World map known as Ravenna map, sixth century.

Die Ältesten Weltkarten, Konrad Miller, Rot'sche Verlag, Stuttgart, 1898. Matenadaran, Yerevan.

Բովանդակություն/Contents

Առաջին մաս - Part 1

2014 Թ. Ադրբեջանի ազգային ատլասի պատմական քարտեզների քարտեզագրական փորձաքննություն	7
Ներածական	8
Ա - Ընդհանուր դրույթներ	9
Բ - Քարտեզների ուսումնասիրություն	11
Գ – Եզրակացություն	36

Երկրորդ մաս - Part 2

A cartographic Examination of Historical Maps in the National Atlas of Azerbaijan, 2014	39
Preface	41
A – General provisions	42
B – Study of Maps	44
C – Conclusion	67

Երրորդ մաս - Part 3

«Արևմտյան Ադրբեջան» հորինված տերմինը	69
Վերջաբան	70
	85

Չորրորդ մաս - Part 4

The Invented Terminology of “Western Azerbaijan”	87
	89
Conclusion	102
Bibliogrpahy Գրականության ցանկ	103

ՄԱՍ 1

**2014 թ. Ադրբեջանի Ազգային
Ատլասի “Պատմական”
Քարտեզների Փորձաքննություն**

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Լինելով քարտեզագետ, հետաքրքրվել եմ բոլոր նոր քարտեզներով, հատկապես ընտրելով Մերձավոր Արևելքի և Հարավային Կովկասի քարտեզները:

Մի քանի տարի առաջ տեղեկացա, որ Ադրբեջանի Հանրապետությունը 2014 թ. հրատարակել է Ադրբեջանի մեծածավալ ատլաս, որի տեքստերն ադրբեջաներեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով են շարադրված: Երկար ժամանակ փորձեցի ատլասից օրինակ ձեռք բերել, սակայն ջանքերս ապարդյուն էին, քանի որ ո'չ Ռուսաստանի Դաշնությունում, ո'չ էլ արևմուտքում դրանք ընդհանրապես հասանելի չէին:

Ի վերջո, հնարավոր եղավ գտնել ատլասի թվային տարբերակը, որն ուշադրությամբ և հետաքրքրությամբ հետազոտեցի: Ի զարմանս ինձ, նկատեցի, որ ատլասը պարունակում է նաև պատմական քարտեզների մի հատված, ուր ներկայացված են, ըստ ատլասի, Ադրբեջանի հնագույն և միջնադարյան շրջանների քարտեզները:

Ինձ անչափ հետաքրքրում էր այն պարագան, որ Արաքսից հյուսիս տեղադրված Ադրբեջանի Հանրապետությունը, որը ծնունդ է առել 1918 թ., ինչպ'ես է կարող ունենալ և ցուցադրել այսպես կոչված իրենց «պատմական քարտեզները»:

Ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ Ադրբեջան անվան բացակայության պատճառով, նրանք ծրագրում են ժխտել նաև Հայաստանի գոյությունը պատմական քարտեզներում և այդ իսկ նպատակով նույնիսկ կեղծում են պատմական քարտեզները, դրանց վրայից ջնջելով «Հայաստան» անվանումները և կեղծվածը ներկայացնելով որպես իրական պատմական քարտեզներ:

Ուստի որոշեցի հրատարակել ներկա աշխատությունը, քանի որ քարտեզագրական կեղծիքներն ու զեղծարարությունները կարիք ունեն պարզաբանվելու և իրականությունը բացահայտելու:

Ռուբեն Գալյան
Երևան, հունվար 2024

Ա - ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ադրբեջանի այս ատլասը, հրատարակվել է Բաքվում 2014 թ.: Ունի շուրջ 450 էջ ծավալ, որից առաջին մասը, էջ 16-31-ը, պարունակում է Ադրբեջանի մասին ընդհանուր տեղեկություններ, իսկ երկրորդ մասը նվիրված է Ադրբեջանի համառոտ պատմական տեղեկություններին և դրանից հետո, հնագույն քարտեզների էջերն են, որոնք պատրաստված են օտար աշխարհագրագետների ու քարտեզագետների ձեռքով, և իբր ներկայացնում են Ադրբեջանի հնադարյան և պատմական անցյալ ունենալու փաստերը: Սրանք տեղադրված են էջ 33-ից մինչև էջ 61:

Սրանց վերջին 13 էջերում՝ էջ 49-ից մինչև 61-ը տեղադրված են Ադրբեջանի քարտեզագետների վերջերս գծած քարտեզները, որոնք պատրաստված են որպես գովազդ, ներկայացնելու իրենց իբր հազարամյակներ լինելու և դրան վերաբարյալ իրենց իսկ հորինած «փաստերը»: Սակայն սրանք նույնիսկ արժանի չեն հիշատակվելու, քանի որ դրանց վրայից ընդհանրապես բացակայում են շրջանի երկու հնագույն երկրների, Հայաստանի և Իրանի անվանումները, երկրներ, որոնք աշխարհով մեկ ներկայացված են հնագույն 10 երկրների շարքում: Այս երկու երկրների անուններն ընդհանրապես հանված են քարտեզների վրայից ու ամբողջ Կովկասյան լեռներից հարավ՝ մինչև կենտրոնական Իրանի գտնվող տարածքը նշված է որպես Ադրբեջան կամ ադրբեջանական խանություններ ու պետություններ: Այս հորինված փաստերը գալիս են հաստատելու ատլասի լուրջ աշխատությունից հեռու լինելու իրողությունը:

Հիշենք, որ Արաքսից հյուսիս Ադրբեջան անունով երկրամաս մինչև 1918 թ. երբևէ գոյություն չի ունեցել, իսկ ատլասի պատմաբանները նույնիսկ իրանական թագավորական ընտանիքներին անվանում են ադրբեջանցի և Իրանի տարածքի կեսից ավելին կոչում *Ադրբեջան*:

Լինելով քարտեզագետ, առիթ ենք ունեցել աշխարհի տարբեր գրադարաններում ու թանգարաններում ուսումնասիրել հնագույն և միջնադարյան քարտեզները և կարող ենք առանց կասկածի հայտարարել, որ մեր հետազոտած տասնյակ հազարից ավելի քարտեզներում միայն մեկ քարտեզ է առկա, գծված 1844 թ. և տեղադրված բրիտանական մի երկրորդական ատլասում, ուր Հայաստանի և Վրաստանի միջև գրված է *Ադրբեջան* տեղանունը, որը, սակայն ատլասի հաջորդ քարտեզներում շտկվել է: Ադրբեջանի քարտեզագետներն այս եզակի քարտեզը դարձրել են իրենց կիզակետը և մատի փաթաթանը, որը նրանք բոլորը գործածում են ամենուր և ամեն առիթով:

Չմոռանանք, որ մինչև 19-րդ դարի վերջը եվրոպական, իսլամական և օսմանյան քարտեզներում ներկա Ադրբեջանի տարածքը կոչված է Շիրվան, իսկ ցարական Ռուսաստանի 1828-1918 թթ. քարտեզներում, որտեղ հարավային Կովկասը բաժանված էր վարչական շրջանների ու գուբերնիաների, դրանցից ո՛չ մեկի վրա և ո՛չ մի տեղ *Ադրբեջան* անվանումը չկա:


19-րդ դարի օսմանյան բոլոր քարտեզներում իրենց պետության հյուսիս-արևելյան մասը կոչված է *Հայաստան*, իսկ, ինչպես վերը նշվեց, ներկա Ադրբեջանի տարածքն անվանված է *Շիրվան*: *Ադրբեջան* տեղանունը տրված է Իրանի հյուսիս-արևմտյան նահանգին, որը

տեղակայված է Արաքսից հարավ: Տե՛ս Ռ. Գալյան, Հայաստան, Ադրբեջան և Թուրքիա, Մշակութային, աշխարհագրական և պատմական հակասությունների քննարկում, 2020, Երևան:

Նախքան բուն պատմական մասում գտնվող քարտեզների մասին խոսելը, կարիք կա բացահայտելու ատլասի հեղինակների ընդհանուր մոտեցումը քարտեզներին, որոնք կարող են հատկանշական լինել առաջին քարտեզներից մեկում: Սա ատլասի Ադրբեջանի Հանրապետություն մեծադիր, երկու՝ 18 և 19 էջերի վրա տեղադրված քարտեզն է, որը վերատպված է որպես Պատկեր 01:

Այս քարտեզն ընդհանրապես հետևում է ԽՍՀՄ Զինվորական գլխավոր շտաբի 1970-ական քարտեզներին: 1936 թ.-ից հետո Հայաստանի քարտեզներում, երևացին երեք ադրբեջանական անկլավ, որոնք են Էսկիպարան, Բարխուդարլուն և ապա՝ Տիգրանաշեն-Քյարքին: Այս երեք անկլավները մեծացրած սահմաններով ներկայացված են վերոնշյալ քարտեզում՝ նշված կանաչ սլաքներով:

Սակայն Արծվաշենի անկլավը, որը ԽՍՀՄ քարտեզներում նշված է որպես հայկական անկլավ՝ տեղադրված Ադրբեջանի տարածքում, և վերոնշյալ քարտեզում նշված է որպես ընդհանրապես Ադրբեջանի ներքին տարածք, որը Հայաստանի հետ որևէ ֆիզիկական կամ այլ կապ չունի: Այս տարածքը նշված է կապույտով և կապուտ սլաքով: Ադրբեջանն այսպիսով, հակառակ իր պաշտոնական անկլավների ճանաչմանը, ատլասում բացառում է Արծվաշենի գոյությունը, կասկածի տակ դնելով ատլասի հավաստի լինելը:



Պատկեր 01 – Ատլասի էջ 18-19-ի վրա ներկայացված ներկա Ադրբեջանի քարտեզը՝ ուր կապույտով նշված Արծվաշենը ներկայացված է որպես Ադրբեջանի մասին:

Իսկ Հայաստանի տարածքում տեղադրված Ադրբեջանի երեք անկլավները ցույց են տրված որպես Ադրբեջանի տարածք:

Բ - ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ինչպես նշվեց, ատլասի Երկրորդ մասը նվիրված է պատմությանն ու պատմական քարտեզներին: Այսպիսով, էջ 34-ից մինչև էջ 38-ը պատմական դեպքերի ադրբեջանական մեկնաբանումներն են, իսկ էջ 39-ից սկսած, առանց որևէ նախաբանի, ընդգրկված են հին շրջանի պատմության քարտեզները: Սրանց կարևորությունը և ատլասում տեղադրվելու մեկնաբանությունն ու պատճառները նշված են միայն պատմական քարտեզները ներկայացվելուց հետո, էջ 49-ի վերի մասում:

Ահա էջ 49-ի առաջին համառոտ տեքստից մեջբերված մի պարբերությունից:

Վեցերորդ դարում պարսից Անուշիրվան արքան հիմնեց կովկասյան Արդապարական միությունը, որն ըստ արաբ-պարսկական ավանդության ներառում է Հյուսիսային Ադրբեջանը՝ Աղվանքը և Հարավային Ադրբեջանը, որը կոչվում էր Արդապարական: Խալիֆայության օրերին Ադրբեջան անունը ներառում էր Հյուսիսային և Հարավային Ադրբեջանները:

Սա ամբողջովին հորինված տեսություն է, քանի որ բոլոր արաբական և պարսկական աղբյուրները, քարտեզագետներն ու աշխարհագրագետները ամեն տեքստի և քարտեզի վրա Աղվանք-Առոանը համարում են տարածք, տեղադրված Արաքսից ու Կուրից հյուսիս, իսկ Ադրբեջանը մշտապես տեղադրված է Արաքսից հարավ, Իրանի հյուսիսարևմտյան մասում, որպես այդ երկրի մի նահանգ: Մինչև 20-րդ դարի կեսերը որևէ քարտեզի վրա *հարավային* կամ *հյուսիսային Ադրբեջան* անվանումը առկա չէ:

Պետք է նաև նշել, որ բոլոր արաբ և պարսիկ քարտեզագետներն ու աշխարհագրագետները Կովկասին վերաբերող իրենց քարտեզներում, այդ երկու երկրամասերից արևմուտք և նույն քարտեզների տեքստերում ամենուր նշում են *Հայաստանը*, որը ատլասի հեղինակներին հաճո չլինելու պատճառով ցուցակից ընդհարապես հանվել է:

Հին քարտեզները ներկայացնող տեքստի էջ 49-ի վերջին պարբերությունը նշում է հետևյալը:

Գրքի քարտեզները հավաքագրված են xxxxxxxx աղբյուրներից:

Անգլերեն լեզվի տեքստում նույն xxxxxxxx բառի տեղ պետք է գրված լիներ incontrovertible- հավաստի, սակայն in նախածանցը մնացել է վերի տողի վերջում և controvertible բառը երևում է մյուս տողի սկզբում, որը նշանակում է *վիճահարույց*:

Բ.1 – ԱՏԼԱՍ, ԷՋ 39

էջը պարունակում է բացատրություններ, որոնցից ձախի երկրորդ պարբերության մեջ նշվում է.

*Կովկասյան ժողովուրդների մասին առաջինը նշում է Ստրաբոնը՝ Ադրբեջանի պարմական քարտեզագրությունը լայնորեն բացատրված են վաղ և միջնադարյան արաբ և պարսիկ պարմաբանների կողմից: Արաբ, անգլիացի, գերմանացի և այլ ճանապարհորդների պատրաստած քարտեզները ներկայացնում են տարբեր դարաշրջանների առաջադեմ գիտնականների գրիչների արգասիքը:
Պարմական աշխարհագրությունը մեծագույն դեր ունի Ադրբեջանի պարմական սահմանները վերականգնելու մեջ:*

Վերոնշյալ տեքստում առկա են մի քանի ոչ ճշգրիտ հայտարարություններ, որոնք են հետևյալները:

I. Կովկասյան ժողովուրդները նշված են Ստրաբոնի աշխատանքների մեջ, սակայն նրա գրվածքներից ոչ մի էջում և աշխատություններում ոչ մի տեղ *Ադրբեջան* անունը չի նշված:

II. Արաբ, պարսիկ կամ եվրոպացի որևէ ճանապարհորդ չի նշել Ադրբեջան անունը իրենց աշխատության մեջ: Եթե որևէ տեղ այս անունը նշվում է, ապա դա ներկայացված է որպես Իրանի Ատրպատական նահանգը:

III. Պարմական աշխարհագրության ու քարտեզագրության մեջ Ստրաբոնից սկսած մինչև Մարկո Պոլո, Կլավիխո, Շիլտբերգեր, Իսթախրի, Մասուդի, Իբն Բատուտա, Քյաթիպ և Էվլիա Չելեբիներ, որևէ տեղ Արաքսից հյուսիս գտվող տարածքի վրա *Ադրբեջան* անունը չի նշվել:

Ադրբեջանի կարգախոսն այն է, որ իրենք ավելի քան 3000 տարի ունեցել են հայրենիք, իսկ իրենց պետականությունն ունի ավելի քան 2000 տարվա անընդմեջ գոյություն: Սակայն ավելի քան 2500 տարվա քարտեզներում նրանց անունը երբևէ և որևէ տեղ չի նշվել: Այս *բացթողումը* բացատրելու նպատակով ատլասի խմբագիրը հավանաբար պատճառ է փնտրում, թե ինչու՞ Ադրբեջան անվանումը քարտեզում ընդհանրապես չկա, որի իրական պատճառները հետևյալն են:


Ադրբեջան անվանումն ընդհանրապես քարտեզների վրա երևան է եկել երկրորդ-երրորդ դարերում, այն էլ Ատրոպատեն կամ Ատրպատական անվանումով, որն ընդհանրապես վերաբերում էր Իրանի նախկինում Փոքր Մարաստան կոչված նահանգին, որ երկրորդ դարից հետո անվանափոխվեց Ատրոպատեն-Ատրպատականի: Արաբների ներխուժումից հետո Իրանի այս նահանգի անվանումը աստիճանաբար տրոհվեց ու դարձավ Ադրբեջան, որն իրականում որևէ երկրի անուն չէր՝ այլ Իրանի հյուսիս-արևմտյան նահանգի անվանումը:

Կովկասից հարավ տարածքին վերաբերող հազարավոր քարտեզների վրա, Արաքսից հյուսիս ընկած տարածքի վրա Ադրբեջան անվանումը չի երևացել, բացի անգլիական մի

ատլասի քարտեզներից մեկի, որի վերաբերյալ բացատրությունների համար տեսեք գրքույկի եզրակացություն գլուխը:

Բ.2 – ԱՏԼԱՍ, ԷՋ 39 – ԲԱԲԵԼՈՆՅԱՆ ԿԱՎԵ ՍԱԼԻԿ

Էջ 39-ի աջ կողմի վերի պատկերը Բաբելոնյան կավե սալիկն է, որն ըստ տեքստի պատրաստված է մ.թ.ա. 8-րդ դ., որը ատլասի բացատրությունն նշում է: Ըստ Բրիտանական գրադարանի սալիկը թվագրվում է մ.թ.ա. 6 դ.:



← Պատկեր 02 – Բաբելոնյան կավե սալիկ, մ.թ.ա. 6-րդ դ. Շրջանների մեջ նշված են Բաբելոնը, Ասորեստանը և Ուրարտուն. Որոնք գտնվում են աշխարհի կենտրոնում:

1. Ատլաս կազմողը կարդացողին ուղղորդում է դեպի այն, որ նրա վրա նշված Ուրարտու երկիրը կարող է Ադրբեջանը լինել: Սակայն նրանք ուշադրություն չեն դարձրել այն հանգամանքին, որ քարտեզը և տեքստը վերլուծող գերմանացի գիտնական Էկհարդ Ունգերը *Ուրարտու* անունը թարգմանել է որպես *Հայաստան* (տե՛ս Պատկեր 03 և Imago Mundi, Berlin, No.2, 1937, էջ. 2):

2. Այս իրականությունը նաև փաստում է մ.թ.ա. 521 թ. պարսից արքա Դարեհ Մեծի Իրանի Քիրմանշահ քաղաքի մոտակա, Բեհիստունյան արձանագրությունը, որի վրայի եռալեզու տեքստում Հայաստանի անունը հին պարսկերենով նշված է որպես *Արմինիյա*, էլամերենով՝ *Հարմինույա* իսկ բաբելոնյան սեպագրում՝ որպես *Ուրարտու*:



Պատկեր 03–Տեքստի թարգմանություն

Պատկեր 03 - Արլասը կազմողը նպատակահարմար կերպով որոշել է չներառնել մասնագետ Ունգերի թարգմանության գծագիրը, որը ներկայացված է այս պատկերում, քանի որ դրա վրա առկա է Հայաստան անունը:

Այսպիսով ատլասի այս քարտեզը հստակեցնում է այն իրողությունը, որ մ.թ.ա. 6 դ., Հայաստանը գոյություն ուներ, իսկ Ադրբեջանը՝ ո՛չ:

Բ.3 – ԱՏԼԱՍ, ԷՔ 40 – ԻԴՐԻՍԻ ԱՇԽԱՐՀԱՑՈՒՅՑ ԵՎ ՊՏՂՈՄԵՈՍԻ ԵՐԿՈՒ ՔԱՐՏԵՁ

Այս էջի վրա պատկերված է չորս քարտեզ, որոնցից վերի աջ քարտեզը և ձախի ներքևի քարտեզը Իդրիսի 1154 թ.՝ հերթականությամբ, *Աշխարհացույց* և *Կովկասի շրջանի* քարտեզներն են, վերցված նրա *Ռոջերի Գիրք*՝ աշխարհագրական գրքից:

Կովկասի այս մանրակրկիտ քարտեզում նշված են երեք երկրներ՝ *Ադրբեջան*, *Աղվանք* և *Հայաստան*: Պարզաբանելու նպատակով աշխարհագրական տեղանունները համարակալված են այսպես.

Կասպից ծով - 1, Արաքս գետ - 2, Կուր գետ - 3, Ուրմիո լիճ - 4:

Նայելով քարտեզի վրայի երկրների անուններին, որոնք գրված են կարմիրով, հանգում ենք հետևյալ եզրակացությանը:

1 - Ադրբեջանը մշտապես անվանված է իր միջադարյան՝ *Ադերբայջան* անունով, և տեղադրված է Արաքսից հարավ, որը քարտեզի վերն է: Այս անունը նշված է երկու անգամ, երկուսն է Արաքսից հարավ գտնվող՝ Իրանի տարածքում: Դրանք ընդգծված են կանաչով: Այդ երկրամասի տարածքը երբևէ Արաքսից ու Կուրից դեպի հյուսիս չի հասնում, հետևաբար, դա միայն կարող է Իրանի Ատրպատական նահանգը լինել:

2 - *Հայաստան* անունը նշված է երեք տեղում, ամեն տեղ ընդգծված կարմիրով: Դրանցից մեկը Ուրմիո լճի հարավում և արևմուտքում է: Մյուսը Ուրմիո և Վանա լճերի միջև եղած տարածքում, իսկ երրորդը, Արաքսից հյուսիս, դեպի Թիֆլիս գտնվող տարածքում:

3 - *Աղվանք* անունը, որպես *Ադերբայջանից* առաձին՝ մի այլ երկրամաս, տեղադրված Կուրի հարավային ափերին՝ ընդգծված կապույտով:



Պատկեր 04-ը արլասի քարտեզի վերադարձությունն է, որի վրա համապատասխան պարզաբանումների վերաբերյալ ավելացված են գունավոր նշումներ:

Բ.4 – ԱՏԼԱՍ, ԷՔ 40 – ՊՏՂՈՄԵՈՍԻ ՓՈՔՐ ԱՍԻԱ ՔԱՐՏԵԶԸ


Էջի վերի ծախում տեղադրված է *Փոքր Ասիա* անվանված ներկայիս Սարմատիայի և Կովկասի տարածքների պտղունեոսյան քարտեզը, որի մասին որևէ բացատրություն առկա չէ: Բացը լրացնելու համար ներկայացնում ենք հետևյալ պարզաբանումներն ու տեղեկությունները:

Ներկայացված քարտեզը, երկրորդ դարում պատրաստված Պտղոմեոսի քարտեզի, և 16-րդ դարում Գերմանիայում Սեբաստիան Մյունստերի վերականգնած քարտեզի կեղծված տարբերակն է, որը նաև սխալմամբ նշված է որպես 11-րդ դարի քարտեզ, քանի որ ատլասի խմբագիրը 1066 էջանիշը սխալմամբ ենթադրել է որպես քարտեզի թվականը:

Պատ.05 –Ատլասում առկա կեղծված քարտեզը



Պատկեր 06 – Պտղոմեոսի ամբողջական քարտեզը:



Պատկեր 05 քարտեզի վրա *Ադրբեջան* անունն ընդհանրապես չի նշված, քանի որ Իրանի հյուսիսարևմտյան նահանգն այստեղ կոչված է իր հինագույն՝ *Մեդիա-Մարասպան* անունով, իսկ Արաքսից հյուսիս այդ անունով երկիր գոյություն չուներ:

Քարտեզի վրա *Ալբանիա-Աղվանքը* տեղադրված է Կասպից ծովից արևմուտք, և Կուրից հյուսիս ընկած տարածքում, որպես *Ադրբեջան-Մարասպանից* առանձին մի այլ երկիր: Այս փաստը վավերացնում են բոլոր իսլամական քարտեզները, որոնց վրա *Աղվանքը* և *Ադրբեջանը* տարբեր տարածաշրջաններ են համարվում:

Հայաստանի անվան հետ կապված ատլասի քարտեզի վրա կատարվել է մի քանի կեղծիք, որոնք ցուցադրելու համար Պատկեր 05-ում վերատպված է ատլասի մեջ տեղադրված քարտեզը: Այս կեղծիքները տեսանելի են երբ հրատարակված քարտեզը համեմատում ենք Մյունստերի իրական քարտեզի հետ, ներկայացված Պատկեր 06-ում:

Քարտեզ մշակողը ցանկացել է Հայաստանի անունն ընդհանրապես վերացնել այս քարտեզից, բայց լինելով ո՛չ մասնագետ, չի կարողացել իր գործը կատարել ամբողջական և ճշգրիտ: Լատիներենով Մեծ Հայքն ու Փոքր Հայքն անվանված են որպես *Armenia maior* և *Armenia minor*, որոնք երկուսն էլ ներկա են Պատկեր 06-ի չկեղծված քարտեզի վրա՝ ընդգծված կարմիրով:

Քարտեզ մշակողն իր օրինակի վրայից ջնջել է ներքևի կենտրոնում գրված *Armenia* անունը, դա համարելով բավարար և բառի տեղն էլ թողել է դատարկ: Նա նույնիսկ չի անդրադարձել, որ այս անվանված ներքևում նշված *maior* բառն էլ Հայաստանի անվան մասն է կազմում և պետք է դա էլ հանվեր, որը նա սակայն, չի կատարել: Այսպիսով *Armenia maior* բառի առաջին մասը հանելով, նա *maior* բառը թողել է միայնակ և առանց որևէ հասկանալի նշանակության: Նա ընդհանրապես չի նկատել, որ քարտեզի ներքևի ձախ ծայրամասում նշված է *Armenia minor*, այսինքն *Փոքր Հայք* անվանումը, որն անտեսվել է և մնացել իր տեղում: Այսպիսով քարտեզի վրա երկու տեղ առկա են *Հայաստան* անունները, իսկ *Ադրբեջան* անունն ընդհանրապես դրա վրա գոյություն չունի:

Քարտեզի գունավոր օրինակը հասանելի է համացանցի ներքևի հղումով
<https://www.historicpictoric.com/products/historic-map-tartaria-olim-scythia-1560-sebastian-mnster?variant=35743117115555>.

Բ.5 – ԱՏԼԱՍ, ԷՁ 40 – ՊՏՂՈՄԵՈՍԻ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՔԱՐՏԵԶԸ

Նույն էջի ներքևի աջ կողմում տեղադրված է երկրորդ դարում Պտղոմեոսի պատրաստած Պարսկաստանի քարտեզի վերականգնումը, որը վերագծել է ոչ թե Վալգրիսին, ումը ադրբեջանական ատլասն է նշում, այլ Ռուսելլին, իսկ Վինչենցո Վալգրիսին 1561 թ. հանդիսացել է Վենետիկում քարտեզի տպագրությունը կազմակերպողը:

Առաջին հայացքից քարտեզի առնչությունն *Ադրբեջանի* հետ նկատելի չէ, քանի որ դրա վրայից ընդհանրապես բացակայում է *Ադրբեջան* անվանումը: *Պարսկաստանի*, *Պարթևաստանի*, *Մարասպանի*, *Միջագետքի* և *Ասորեստանի* անունները նշված են և

ընդգծված կարմիրով՝ որոնք նույնությամբ ներկա են ատլասից վերցված, բայց կեղծված քարտեզի՝ Պատկեր 07-ի և Պատկեր 08-ի քարտեզներում: Իսկ Պատկեր 07-ի վերը, դատարկ, ծախ մասում կարմիրով, աշխատությանս հեղինակն ավելացրել է մի հարցական նշան:

Քարտեզի բնագրում այս հարցական նշանի տեղում գրված է եղել *ARMENIA PARS*, այսինքն *Մաս Հայաստանի*: Հավանաբար քարտեզը ատլասի մեջ է տեղադրվել ցուցադրելու, որ միջնադարում Հայաստան անունը շրջանի երկրների մեջ չի եղել: Մինչդեռ երբ նայենք քարտեզի իրական՝ չկեղծված բնօրինակին, որոնցից մեկը գտնվում է Բրիտանական գրադարանում, նաև վերատպված է Պատկեր 06-ում, խնդիրն ամբողջովին փոխվում է և երևան է գալիս քարտեզի վրա կատարված կեղծիքը:



07 – Ֆրանչեսկո Ռուսելլի/ Վալգրիսիի 1561 թ. ատլասի "մշակված" քարտեզը:

Պատկեր 08-ը պարզաբանում է կատարված կեղծարարությունը: Այս անադարտ բնագիր քարտեզում կարելի է տեսնել, որ դրա վերի ծախ անկյունում, քարտեզ 07-ի վրա նշված հարցականի տեղում առկա է եղել մի երկրի անվանում ևս, որն է *ARMENIA PARS*, այսինքն

Հայաստանի մեկ մասը, և նրան կից մի քանի լեռների գծագրեր, որոնք բոլորը ջնջված են Պատկեր 07-ի վրայից, տարածքն ամբողջովին թողնելով դատարկ:

Ըստ խմբագրի, կամ նրան տրված կարգադրության, քանի որ քարտեզի վրայից բացակայում է *Աղբրեջան* անվանումը, ապա կարիք չկա, որ *Հայաստան* անվանումը առկա լինի նույն քարտեզում: Հետևաբար նշված *Հայաստան* անունը և նրան հարակից լեռները ևս պետք է ընդհանրապես ջնջվեն ու հանվեն այս էջից: Քարտեզ մշակողն այս աշխատանքը կատարել է անթերի և վարպետությամբ, այդ երկրամասը թողնելով առանց որևէ աշխարհագրական նշանի ու անվան: Սակայն այսպիսի մանրամասներ նկատելի և բացահայտելի են փորձված մասնագետի համար:

Պատկեր 08-ում վերատպված է նույն քարտեզի անաղարտ տարբերակը, որի օրինակը առկա է նաև Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում, Լոնդոնի հանրահռչակ Բրիտանական գրադարանի արխիվներում, և որի գունավոր տարբերակը նաև հասանելի է հանրությանը՝ համացանցում, տեղադրված տարբեր արխիվային նյութերի մեջ: Սրանցից է ներքո տրված հղումը:

<https://aradernyc.com/products/copy-of-ruscelli-girolamo-tabula-asia-vi-venice-c-1562> .



Պատկեր 08 –
Ռուսելլիի
քարտեզը, որը
հասանելի է
նաև կայքում և
Բրիտանական
Գրադարանում:

Այսպիսով բացահայտվում է քարտեզի տեղադրման գաղտնիքը, այն, որ Պատկեր 07-ի վրա քարտեզի պատկերում նշված հարցական նշանի տեղում, գրված է եղել *ARMENIA PARS*

(Հայաստանի մեկ մասը) քարտեզագետի տված անվանումը: Այս անվան առկայությունը ատլասի խմբագրի համար անընդունելի է:

Պետք է նշել, որ ժամանակի բոլոր պտղմեղայան քարտեզներում հնարավոր չէ գտնել մեկը, ուր այս տարածքի վրա առկա չլինի Հայաստան երկրի անվանումը և այս նպատակին հասնելը միայն հնարավոր է եղել քարտեզը խեղաթյուրելով ու Հայաստան անունը նրանց վրայից ջնջելով, որը կատարվել է այստեղ:

Բ.6 – ԱՏԼԱՍ, ԷՋ 41 - ՕՐՏԵԼԻՈՍԻ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՔԱՐՏԵԶԸ

Այս էջի վրա տեղադրված հանրահայտ Աբրահամ Օրտելիուսի 1570 թ. Պարսկաստանի Պատկեր-08 քարտեզն անվանված է *Persici*, որ նշանակում է *Պարսկաստան*: Գրքի խմբագրողը սակայն չի հասկացել որ դա Պարսկաստանի անվանումն է, հետևաբար նույնը արտագրել է ատլասի եռալեզու հրատարակված տեքստում՝ որպես *Persici*, որպես անվանում:

Ատլասում առկա տեքստում գրված է, որ այստեղ առկա են տեղեկություններ Ադրբեջանի մասին, որտեղ նշված են Ադրբեջանի քաղաքներից *Դերբենդի, Շեքարանի, Բաքվի, Սիագի, Արդաբիլի, Թավրիզի, Ջանջանի* և *Շամախի* տեղանունները:

Ատլասում վերատպված քարտեզը զննելիս գալիս ենք հետևյալ եզրակացությանը: Քարտեզի վրա ոչ մի տեղ Արաքս և Կուր գետերի մոտակայքում նշված չէ որևէ *Ադրբեջան-Ազերբայջան* անվանումը: Դրա փոխարեն, Իրանի արևմտյան սահմանում, Լոռեստան նահանգի անվան մոտ նշված է *Ադիլբեգիան*, ընդգծված կանաչով, որն Իրանի Ատրպատական նահանգի անվանումն է:

Շիրվան շրջանը, ընդգծված կապույտով, որը գտնվում է Կուր գետից հարավ, Արաքսի մոտակայքում իսկ *Դերբենդ, Շեքարան, Բաքու* և *Սալյան* քաղաքները տեղադրված են *Շիրվանից* հյուսիս գտնվող տարածքում: 16-րդ դարում այս տարածքը Պարսկաստանի գերիշխանության ներքո էր գտնվում, ուր առկա էին մի քանի իսլամական խանություններ և հայկական քրիստոնյա մելիքություններ:

Ամենահետաքրքիրն այն է, որ *Ադրբեջան* տեղանունը քարտեզում Կովկասից հարավ տարածքից ընդհանրապես բացակայում է, փոխարենը Իրանի արևմտյան և հյուսիս-արևմտյան սահմանի մոտ մեծ տառերով նշված է *ARMENIA* «Հայաստան» երկրի անվանումը, ընդգծված կարմիրով, որն ըստ ադրբեջանական պատմաբանների, այդ օրերին գոյություն չի էլ ունեցել:



Պատկեր 09 – Արլասում վերադարձված քարտեզից հատված, որի վրա ավելացված են հեղինակի նշումները:

Բ.7 - ԱՏԼԱՍ, ԷՔ 42_ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՔԱՐՏԵՐ



Պարկեր 10 – Արլասում վերադրված է Գաշտալդիի 1593 թ., դե Յոդեի բնագրի վրա հիմնված Ասիայի քարտեզից անորակ մի հատված, որ վրա տառերը համարյա անընթեռնելի են:


Բ.8 - ԱՏԼԱՍ, ԷՋ 43 - ԿԱՍՊԻՑ ԾՈՎԻ ՔԱՐՏԵԶ

Ատլասի այս պատկերը ցուցադրում է Կասպից ծովը, ուղղորդված հյուսիսը ձախում: Քարտեզում որևէ տեղ *Ադրբեջան* անվանումը տեսանելի չէ: Փոխարենը քարտեզը տեղադրողը նշում է *Շիրվանի* անունը, որն ինչպես նշվեց, աշխարհագրական մի տարածք է Կասպից ծովից արևմուտք:

Շիրվանում 17-19-րդ դդ. իշխում էին մի քանի մուսուլման խաներ կամ իշխաններ, ովքեր հարկ էին մուծում պարսից արքային: Նույն ժամանակ դրանց կից՝ Արցախում իրենց պապենական տարածքները կառավարում էին ինքնիշխան հինգ հայ մելիքները, ովքեր նույնպես հարկ էին մուծում պարսից արքային, բայց իշխում էին ինքնավար և նույնիսկ ունեին զորախմբեր: Սրանք էին Դիզակի, Ջրաբերդի, Խաչենի, Գյուլիստանի և Վարանդայի մելիքները:

Բ.9 – ԱՏԼԱՍ, ԷՋ 44-Ի ՎԵՐԻ ԿԵՍԸ - ԱՍԻԱ

Ասիայի այս քարտեզը պատրաստել է Նիկոլաս դե Ֆերը, որը ցուցադրում է Ասիայի տարածքը, ուր հիմնականում առկա են մեծ կայսրությունների անվանումները:



Պատկեր 12 – Սա է քարտեզին կից բացատրությունը:

Քարտեզի տեքստը ֆրանսերեն է, ուր “L” նախաձայնը դրված է անունից առաջ, *l’Asie*, այսինքն՝ *Ասիա*, իսկ կիսագրագետ թարգմանողը դա թարգմանել է անգլերենի որպես “*Ասիա L*”:

Գալով քարտեզի վերաբերյալ գրությանը, թարգմանը նշել է, որ քարտեզի հրատարակիչն են Ֆերը և Նիկոլասը, որոնք սակայն քարտեզի արտոնյալ Արքայական քարտեզագրի՝ Նիկոլաս դե Ֆերի անունն ու ազգանունն են:

Իսկ անգլերեն թարգմանված տեքստի վերջին երկու տողերն ընդհանրապես որևէ միտք չեն հաղորդում:



Պատկեր 13 - Հարված արված էջ 44-ի Ասիայի քարտեզից, 1717 թ.:

Ինչպես տեսանելի է Պատկեր-13 քարտեզում, փոքր երկրների անվանումները չեն նշված, այդ իսկ պատճառով Կովկասի և Միջին արևելքի շրջանում միայն նշված են Թուրքական և Պարսկական տերությունները: Ադրբեջան անվանումն ընդհանրապես քարտեզից բացակայում է, իսկ *Շիրվանը*, ինչպես նշվեց, համեմատաբար մեծ տարածք էր, որ այդ տարածքի ժամանակակից անվանումն էր, ուր իշխում և առկա էին պարսկական խանություններ և հայկական մելիքություններ:

Բ. 10 - ԱՏԼԱՍ, ԷՋ 44-Ի ՆԵՐՔԵՎԻ ՁԱԽՈՒՄ - ԿԱՍՊԻՑ ԾՈՎԻ ՔԱՐՏԵԶ

Ատլասի այս քարտեզը պատրաստել է անգլիացի Հերման Մոլլը և հրատարակել 1736 թ., հիմքում ունենալով 1719-1721 թթ. Կասպից ծովի շրջանի տեղագրությունների արդիականացված արդյունքները: Այստեղ էլ թարգմանը հրատարակչի անունը, որն իրականում *Thomas Bowles & John Bowles* է, դարձրել է *Boulz*, փաստելով, որ նա անգլերեն լեզվին տրիրապետելուց բավականին հեռու է:

Քարտեզի վրա ընդհանրապես *Ադրբեջան* անունը գոյություն չունի, հետևաբար անհայտ է թե ինչու է խմբագիրը որոշել նման մի քարտեզ տեղադրել իբրև *Ադրբեջանի* պատմական մի քարտեզ:

Քարտեզում Կասպից ծովից արևմուտք միայն նշված են *Դաղստանը*, *Շիրվանը* իսկ Բաքվի կողքին մեծ տառերով նշված է *Պարկաստանի կամ Մարաստանի մասը*, ցույց տալով, որ ժամանակին երկրամասը Պարսկաստանի գրաված տարածքի մասն էր կազմում և *Ադրբեջան* անվանումը գոյություն չուներ:

Բ. 11 - ԱՏԼԱՍ, ԷՋ 44-Ի ՆԵՐՔԵՎԻ ԱՋ ՄԱՍՈՒՄ - ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՔԱՐՏԵԶ

Ատլասի այս քարտեզը ցույց է տալիս Պարսկաստանի տարածքը 19-րդ դ. սկզբին: Կից տեքստում նշվում են միայն մասնակի տեղեկություններ: Քարտեզագետը և հրատարակիչը նույնն են՝ Լուկաս Ֆիլդինգը, ԱՄՆ-ի Բալտիմոր քաղաքից:

Պատկեր 14-ի քարտեզի բացատրության տեքստը հայտարարում է, որ քարտեզի հյուսիսային մասը ամբողջովին *Ադրբեջանն* է: Սակայն խմբագիրը չի նկատել որ Պարսկաստանի հյուսիսային և արևմտյան շրջանների վրա գրված է *IRAK AJEMI*, և այստեղ *Ադրբեջան* անվանումն ընդհանրապես գոյություն չունի: Իրաք-Աջեմի անունով նշվում են են Իրանի հյուսիս և արևմտյան շրջանները, որի անունը քարտեզի վրա ընդգծված է կարմիր: Իսկ ինչպես նշվեց, ատլասի կազմող ու խմբագրող *ադրբեջանցի* մասնագետների հայտարարած *Ադրբեջան* անվանումն այս քարտեզից ընդհանրապես բացակայում է:

Նրանք երկրամասի Իրաք-Աջեմի անունը կամ չեն նկատել կամ էլ դրա միտքը նույնիսկ չեն հասկացել: Թերևս նաև մտածել են, որ *Իրաք* բառը, տեղակայված լինելով լեռների գծագրերի արանքում, կարդացողն ընդհանրապես չի էլ նկատի:



Պարկեր 14 - էջ 44-ի Պարսկաստանի քարտեզը 1823 թ.:
Իրաք-Աջեմի անվանումն ընդգծված է կարմիր:

Բ.12 - ԱՏԼԱՍ, ԷՋ 45 - ԻՐԱՆ ԵՎ ԹՈՒՐԱՆԻ ՔԱՐԿԵՂ



Պատկեր 15 – Աղյասում վերադրված է գերմանական 1831 թ. «Իրան և Թուրան քարտեզը», որը պատկերում է ժամանակին այդ տարածաշրջանի երկրների ու նահանգների անվանումները:

Ընթերցողին օժանդակելու նպատակով, քարտեզի վրա աշխատությանս հեղինակն ավելացրել է որոշ նշումներ, տեղանունները հստակեցնելու նպատակով:

Պատկեր 15-ի «Իրան և Թուրան քարտեզի» կարտուշը, վերցված է նույն քարտեզի մեկ ուրիշ մասից ու փակցված այս հատվածի վրա, այդպիսով ծածկելով *KASPIESCHES MEER*, *Կասպից ծով* անվան առաջին երկու՝ ընդգծված տառերը:

Բացատրության մեջ ատլասի տեքստը հանգում է հետևյալ եզրակացությանը.

Քարտեզը ներկայացնում է մանրամասն աշխարհագրական տեղեկություններ: Այս հատվածում նշված են բնակավայրերին տրված յուրահատուկ աղբյուրների անվանումները:

Խմբագիրը ամենևին արհամարհում է այն պարագան, որ այստեղ *Աղբյուրների* անվանումը տրված է միայն Արաքսից հարավ տեղակայված *Աղբյուրների-Արաքսյան* պարսկական նահանգին, որն ընդգծված է կանաչ:


Բաքվի շրջակա տարածքներն անվանված են *Շիրվան*, ընդգծված դեղին, որը տարածքի միջնադարյան անվանումն էր: Իսկ ամբողջ տարածքը ներառված է *TRANSKAUCASIEN*-Անդրկովկասի տարաշքում, ընդգծված մանուշակագույն:

Ամենակարևորն այն է, որ ատլասի այս քարտեզում խմբագիրը մոռացել է կարգադրել ջնջել ու հանել *ARMENIEN-ՀԱՅԱՍՏԱՆ* անունը, ընդգծված կարմիր, որը տեղադրված է Վանա լճից մինչև Սևան, որից արևելք նշված է նաև Ղարաբաղ անվանումը, ընդգծված կապույտ:

Այսպիսով, քարտեզում առկա են *Հայաստանն* ու *Ղարաբաղը*, բայց ոչ *Աղբյուրներ*: Սակայն նույն անվանումով՝ Արաքսի հարավային ափերին առկա է պարսկական *Աղերբիջան* կոչված նահանգը, որի անվանումը հնում Մարաստան է եղել, ապա դարձել Ատրոպատեն, որն աստիճանաբար տրոհվել ու դարձել է Ազերբայջան:

Բ.13 - ԱՏԼԱՍ, ԷՋ 46 - ԿՈՎԿԱՍՅԱՆ ՊԱՐԱՆՈՑԻ ՔԱՐՏԵԶ

Ատլասի քարտեզը նույնն է ինչ Պատկեր 15-ի քարտեզը, բայց ատլասում վերատպված քարտեզն այնպիսի մի մասից է հատվել, որպեսզի ARMENIAN անվան առաջին՝ A տառը կտրվի ու Հայաստանի անունը դառնա անընթեռնելի ու անհասկանալի մի անվանում: Այդ իսկ պատճառով աշխատությանս հեղինակը գտնելով քարտեզի օրինակը, տեղադրել է այս էջում և ցուցադրում այնպես, որ Հայաստանի ARMENIA անվանումն ամբողջովին երևա ու տարածքի անվանումը դառնա հասկանալի:



Պատկեր 16 - «Կովկասյան պարանոցը», գերմանացի Գոեսսրլի 1856 թ. աղյուսից՝ վերցված համացանցի կայքից: Կայք <https://www.davidrumsey.com/luna/servlet/detail/RUMSEY~8~1~21919~690011:Karte-des-Kaukasischen-Isthmus---En>


Այս քարտեզում ևս, ինչպես Պատկեր 15-ի վրա, Բաքուն ու իր շրջակայքը կոչված են *Շիրվան* անունով, ընդգծված կապույտով: Քարտեզից ընդհանրապես բացակայում է որևէ Ադրբեջան անվանումը:

Ադրբեջանի փոխարեն ատլասի այս քարտեզի վրա առկա են երկու հին երկրներ, որոնք են *Հայաստանը*, և իր նահանգ *Արարատը*, ընդգծված կարմիրով, որոնք տարածվում են Վանա լճից մինչև Սևան, և *Արցախ-Ղարաբաղը*, որն ինքը տարածվում է Հայաստանից դեպի արևելք, Սյունիքից մինչև Արաքսի և Կուրի խառնարանը՝ ընդգծված դեղինով:

Քարտեզը մանրամասն ուսումնասիրողը տեղանունների մեջ կարող է նաև գտնել տարածքների ու քաղաքների հայկական պատմական անվանումները, ինչպիսին են, օրինակ՝ Արցախը, Շուշին, Այրարատը և այլն: Սակայն որևէ ադրբեջանական անվանում գոյություն չունի:

Ք.14 - ԱՏԼԱՍ, ԷՋ 47 - ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՔԱՐՏԵՐ ԵՎ ԱՂՅՈՒՍԱԿ, 1880

Պատկեր 17-ի քարտեզը ներկայացված է առլասի էջ 47-ում: Քարտեզը վերցված է գերմանական գրականությունից: Քարտեզի ներքևի աղյուսակը բաժանված է ըստ ցեղախմբերի անվանումների: Սրանց մեջ են հնդեվրոպական, կովկասյան ժողովուրդները, ապա գալիս են ուրալյան և վերջում ալթայական ժողովուրդները:



Պատկեր 17 - էջ 47-ի եվրոպայի ազգագրական քարտեզը, 1880 թ.

Հնդեվրոպական ժողովուրդների մեջ նշված են պարսիկները (10), քրդերը (11) և հայերը (12): Կովկասյանների շարքում են վրացիները (14), մեգրեղները (18), լազերը (20), կաբարդինները (21) և լեզգիները (22): Ասիայի երկու լեռնային ժողովուրդներն են ուրալյան

լեզվաընտանիքին պատկանող հունգարացիները (23), իսկ մյուս լեռնային՝ ալթայական ժողովուրդներից են ղրղզները (26) և թաթարները (28):

Այստեղ ոչ մի թուրք և ադրբեջանցի ժողովրդի անվանում գոյություն չունի: Հեռաբար աղյուսակը ցույց է տալիս ատլասի նպատակի հակառակը՝ այն, որ Կովկասի հարավում ադրբեջանցիներ ընեն ապրել:

Խմբագիրն այս տեղեկությունը տեղադրել է հավանաբար ցանկանալով ներկայացնել որպես փաստ, ասելու որ հայերին Կովկասի հարավ և հարավ-արևմուտք են բերել ռուսները՝ 19-րդ դարում: Նա կամ անտեսել կամ անտեղյակ է եղել այն իրականությունից, որ 1604-05 թթ. պարսից Շահ Աբբասը Արաքսից հյուսիս գտնվող Նախիջևանից, Սյունիքից, Արցախից ու Արարատյան դաշտից բռնի Պարսկաստան քշեց տարածքի ամբողջ հայ բնակչությանը, շուրջ 250-300.000 մարդ, նպատակ ունենալով ամբողջ շրջանը Օսմանյան կայսրության համար դարձնել անմարդաբնակ ու ո՛չ գրավիչ, հետևաբար դրա հանդեպ չունենալու նկրտումներ: Իսկ 1804-1813 և 1828-1829 թթ. պատերազմներից հետո, բռնագաղթված հայերից միայն հազիվ մեկ տասներորդը կարողացավ վերադառնալ հայրենիք:

Նույն ժամանակ քարտեզը փաստում է, որ Թուրքիայի ու ամբողջ Ադրբեջանի տարածքում ներկայում բնակվող թյուրքախոս թաթարները ալթայական ցեղեր են: Այսինքն իրականում նրանք են Կովկասում, Հայկական լեռնաշխարհում և Փոքր Ասիա դրսից եկվորները, ոչ թե հայերը, ովքեր ըստ դանիական գիտական պարբերականի, իրենց հայրենի տարածաշրջանում են ապրել ավելի քան ութ հազարամյակ¹:

Բ.15 – ԱՏԼԱՍ, ԷՋ 49 – ՆՈՐԱՍՏԵՂԾ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՆԿՐՏՈՒՄՆԵՐԻ ՔԱՐՏԵԶԸ

Երբ 1918 թ. մայիսին կազմավորվեց Ադրբեջանի Հանրապետությունը: Առաջին անգամ Արաքսից հյուսիս գտնված տարածքին տրվեց *Ադրբեջան* անվանումը, որը հնուց, Արաքսից հարավ գտնվող իրանական նահանգի անունն էր:

Քարտեզը վերցված է ատլասից, սակայն բացատրության մեջ տրված է սխալ տարեթիվ՝ 1917 թ.: Այդ միտումնավոր կեղծիքը դյուրին է բացահայտել, քանի որ Ազերբայջան-Ադրբեջան անունն առաջին անգամ նրա ներկա տարածքին տրվել է 1918 թ. մայիսից հետո, խմբագիրն աշխատել է անվանումը լեգիտիմացնել և դարձնել ավելի հին:

¹ Margaryan et al., Current Biology, vol. 27, 2017. “Eight Millennia of Matrilineal Genetic Continuity of the South Caucasus”. 2023-2027 & e1-e7.




Պատկեր 18 - Ադրբեջանի առաջին հանրապետության Ազգերի լիգային ներկայացված պահանջած սահմանները: Սրանց մեջ են նաև բաց դեղինով և կարմիր շեղ գծերով նշված հարևան երկրներին պատկանող տարածքները:

Իրականում քարտեզը պատրաստվել է 1919 թ., Սևրի համագումարի մասնակիցների համար, որպես Ադրբեջանի Հանրապետության սահմանները, որին ըստ Ադրբեջանի, պետք էր դեռ ավելանային շեղ՝ դեղին գծերով նշված տարածքները Հայաստանից, Վրաստանից ու Դաղստանից: Իհարկե այդ դիմումը մերժվեց, ինչը սակայն Ադրբեջանի իշխանությունների ախորժակը հարևանների տարածքներին տիրանալու համնար, չփակեց:

Այս մասին նաև կարելի է տեսնել հաջորդ, պատկեր 19 քարտեզում:

Բ.16 - ԱՏԼԱՍ, ԷԶ 58 - ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ 1920-1922 ԹԹ. (ԻՐԱԿԱՆՈՒՄ 1930 Թ.)




Պարկեր 19 – Խորհրդային Ադրբեջանի քարտեզը, որի թվականը նշված է որպես 1920-1922 թթ., սակայն ցուցադրում է 1929 թ.-ից հետո արդեն փոխված սահմանները, որոնք նշված են կապույտ:

Ինչպես հայտնի է Ադրբեջանը ծնունդ է առել 1918 թ., և ահա դրանից հազիվ երկու տարի անց տարածքային պահանջներ է ներկայացնում հարևան պետություններին: Բանն այն, որ այս թվականի անվան տակ սխալ քարտեզ է ներկայացվում, որի վրա ցույց է տրված 1930-1940 թթ. Սահմանները՝ քանի որ մինչև 1927-1930 թթ. կապույտ նշված տարածքները գտնվում էին Խորհրդային Հայաստանի կազմի մեջ: Այդ հողերը Խորհրդային Ադրբեջանին տրվեցին միայն 1927 թ. հետո: Քարտեզի վրա հայկական այն տարածքները, որոնք մինչև 1927 թ. Խորհրդային Հայաստանին էին, նշված են կապույտով: Իսկ Խորհրդային Հայաստանի տարածքում անկլավներ գոյություն չունեն:

Ադրբեջանը նույնիսկ սրանով չի բավարարվում ու հարևան երկրների տարածքների վրա շեղ կարմիր գծելով՝ նշված տարածքները հայտարարում է որպես Ադրբեջանից գրավված հողամասեր:

Բավական է նայել պատկեր 20-ում վերատպված Ադրբեջանի 1926 թ. քարտեզին, անդրադառնալու թե ժամանակին Խորհրդային Ադրբեջանի իրական սահմանները որոնք էին: Նախկին, Պատկեր 19 քարտեզում կապույտով նշված տարածքները ցուցադրված են որպես Հայաստանինը, և տեղադրված են Խորհրդային Հայաստանի տարածքում: Այդ քարտեզը կարելի է գտնել Սովետական առաջին մեծ հանրագիտարանի 1926 թ. Մոսկվայում հրատարակած հատորներում: Քարտեզում որևէ անկլավ գոյություն չունի:



Պատկեր 20 – Խորհրդային Ադրբեջանի քարտեզը, ըստ Սովետական մեծ հանրագիտարանի 1926 թ. հրատարակության, ուր անկլավներ չկան ու Խորհրդային Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը (Արցախը) սահմանակից են:

Գ - ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ադրբեջանի ազգային ատլասի 2014 թ. հրատարակումը նպատակ ունի առաջին հերթին ներկայացնելու երկիրը, բնականաբար իրենց պատրաստած քարտեզներով: Սակայն աշխատելով թափանցել պատմության խորքերը, նրանք կարիք են զգացել անգամ ևս «փաստել», որ Ադրբեջան անվանված երկիրն ունի հնագույն պատմություն և ավելի քան 2000 տարվա պետականություն:

Ատլասը կազմողները աշխատելով օտարների քարտեզների միջոցով Ադրբեջանը ներկայացնել որպես մի հնամյա երկիր, ցանկացել են իրենց տեսությանը տալ իրավական լեգիտիմություն: Այս նպատակով գրքի մեկ մասում ներկայացրել են իրենց կողմից հորինած պատմությունը և աշխատել դրանք օրինականացնել հնագույն և միջնադարյան քարտեզների միջոցով: Ահա այստեղ է նրանց սխալը, քանի որ հնագույն և միջնադարյան քարտեզներն ըստ էության, ներկայացնում են տարբեր իրականություն: Մինչև 1918 թ. Արաքսից հյուսիս տարածքը երբևէ Ադրբեջան չի կոչվել և այս իրականությունը պարզ նկատելի է բոլոր հնագույն քարտեզներում:

Բազմահազար քարտեզների շարքին առկա է տարածքին վերաբերող միայն մեկ քարտեզ, հրատարակված S.D.U.K. բրիտանական կազմակերպության 1844 թ. Լոնդոնում հրատարակված ատլասում, որի վրա Կովկասի հարավում առկա է *Ադրբեջան* անվանումը, սակայն նույն ատլասի մյուս քարտեզներում այդ անվանումը հանված է:

Ատլասում վերատպված մյուս քարտեզներից և ոչ մեկի վրա նախքան 1918 թ. Կովկասի հարավում Ադրբեջան անունով երկիր գոյություն չի ունեցել, մինչդեռ դրանց բոլորի վրա առկա է Հայաստանը, եթե նույնիսկ դա որպես անկախ պետականություն չի ներկայանում: Հայաստան անունը քարտեզներում առկա է, քանի որ տվյալ շրջանի բնակչության մեծամասնությունը բնիկ հայերն էին:

Խմբագիրը մի քանի հնագույն քարտեզներից փորձել է ջնջել *Հայաստան* անունը և այսպիսով մաքրագրված քարտեզը տեղադրել է ատլասում, որը, սակայն, մեր ուշադրությունից չի վրիպել: Նպատակն է եղել այն, որ հնագույն քարտեզներում առկա է Աղվանքը, որը նրանք երբեմն համարում են իրենց նախնիների պետությունը՝ սակայն Հայաստանի անունը նրանց վրա նշված չէ: Գտնելով քարտեզների անաղարտ օրինակները, դրանց վրա ցուցադրվել է Ադրբեջանի ատլասի ներկայացրած կեղծիքը: Մի քանի քարտեզում նաև բացահայտել ենք ինչպե՞ս և ինչու՞ են արվել այս կեղծարարությունները և մյուսներով ցույց ենք տվել այն, որ քարտեզների վրա մինչև 1918 թ. Ադրբեջան երկիրն առկա չէ, իսկ բոլորի վրա Հայաստանն առկա է իր Մեծ ու Փոքր Հայքերով:

Կեղծիքներ անելն ադրբեջանական քարտեզագրության մեջ արդեն կայացած սովորույթ է: Նկատելի է, թե նրանք ինչպես են կեղծում ու ներկայացնում ադրբեջանցի քարտեզագիրների պատրաստած բազմաթիվ քարտեզներ՝ ամեն կերպ ու միջոցով ցույց տալով իրենց իսկ որոշած սահմանները: Այս գործողությունների համար նրանց հիմքում ընկած գործոնը ինքնության խնդիրն է: Սա այն է, որ մինչ այսօր ադրբեջանցիները դեռ չեն

որոշել, թե որ ազգն ու ցեղն են իրենց նախնիները՝ կովկասյան ալբանացիները, այսինքն աղվանները, թե՛ միջին ասիական օղուզ թյուրքական ցեղերը:

Եվրոպացիների հետ քննարկելիս նրանք իրենց ներկայացնում են որպես քրիստոնյա ալբանացիների ժառանգներ՝ հավակնելով տարածաշրջանի բոլոր քրիստոնեական եկեղեցիներին և վանքերին աղվանական լինելը, չնայած այն հանգամանքին, որ դրանց մեծ մասը կառուցվել է այն ժամանակ, երբ ալբանական գրեթե բոլոր ցեղերն ընդունել էին իսլամը:

Ավելին, եթե այս քրիստոնեական հուշարձանները պատկանել են իրենց նախնիներին՝ ալբանացիներին, ապա ինչու՞ են դրանք ոչնչացնում. ինչպես օրինակ Ջուղայի միջնադարյան հայկական գերեզմանատան ավերումը և բնաջնջումը, որը նրանք նախ պնդում էին, որ ալբանական գերեզմանոց է, իսկ մի քանի տարի անց այն ամբողջությամբ արմատախիլ արեցին՝ տարածքը վերածելով ռազմական փորձադաշտի: Այս նույն ճակատագրին են արժանացել ադրբեջանական վերահսկողության տակ Նախջևանի տարածքում գտնվող ԲՈԼՈՐ քրիստոնեական հուշարձանները:

Միևնույն ժամանակ Թուրքիայի և իսլամական աշխարհի հետ ազգությունն ու ժառանգությունը քննարկելիս իրենք իրենց ներկայացնում են որպես թուրք՝ պնդելով, որ Թուրքիայի և Ադրբեջանի ժողովուրդները «մեկ ազգ են՝ բաժանված երկու երկրի», ինչի համար նրանք մեղադրում են Ռուսաստանին և Իրանին:

Նրանք նաև պնդում են, որ Ադրբեջանը և Կովկասյան Ալբանիան նույն երկրի երկու անվանումներն են, ինչը սակայն հակասում է գոյություն ունեցող բոլոր իսլամական քարտեզներին և պատմական գրականությանը: Ճշմարտությունն այն է, որ իններորդից մինչև տասնվեցերորդ դարերի միջև գծված բոլոր իսլամական քարտեզների վրա Ադրբեջանը և Ալբանիան (Արրան) միշտ ներկայացված են որպես երկու հստակորեն տարբեր հարևան շրջաններ:

Որքան էլ այդ կեղծիքները տարածվեն ու հանրահռչակվեն, ի վերջո իրականությունն ու ճշմարտությունը կհաղթահարեն ամեն պատնեշ և կվերածնվեն, իսկ ադրբեջանցիների հաջորդ սերունդները կպահանջեն իմանալ փաստերն ու իրականությունը՝ հասկանալու համար իրենց ժառանգությունն ու ինքնությունը:

PART 2

A CARTOGRAPHIC EXAMINATION OF HISTORICAL MAPS IN THE NATIONAL ATLAS OF AZERBAIJAN, 2014

Preface

Being a specialist of maps, I am naturally interested in all newly produced maps, especially when they are concerned with the region south of the Caucasus and Asia Minor, where historic, as well as the Independent Republic of Armenia could be found.

A few years ago, I found out that in 2014 Azerbaijan had published country's National Atlas, a large volume of some 450 pages and many maps, in three languages, Azerbaijani Turkish, English and Russian. I was naturally interested in obtaining a copy of the atlas and study it. Years of my efforts were not successful, as none were available in the Russian Federation and various eastern and western country bookshops.

Eventually I was able to obtain a digital version of the Atlas, which I studied with interest and attention, and finally managed to get a copy of the actual Atlas. I found out that the Atlas also contains a section about history, where, according to the description in the Atlas, a number of old and medieval maps of Azerbaijan were presented.

I could not understand how a country located on the northern shores of the Arax River, having been founded only in 1918, could present claims of on having “historic” lands and regions from its neighbours, as well as present a large number of early and medieval maps confirming their existence.

Detailed studies brought me to the conclusion that for the present-day Republic of Azerbaijani scholars and authorities, the Iranian Province of Azerbaijan, as well as other areas from their neighbouring countries they consider to be their own lands. Furthermore, since the name of Azerbaijan has not been mentioned on early maps, the editors of the Azerbaijani atlas have tried to also remove the name of Armenia on the same maps. To this end, they have erased the name *Armenia* from some old maps and presented their falsified maps in the Atlas, as true copies of these ancient and medieval maps.

This led me to conclude that these falsifications and misrepresentations need exposure, so that the public are aware of the falsifications and the truth is explained and told.

Rouben Galichian
Yerevan, 2024

A – GENERAL PROVISIONS

This *National Atlas of Azerbaijan* was been published in Baku in 2014. It is a volume of about 450 pages, of which the first part, pages 16-31, containing general information about Azerbaijan, The second part is dedicated to a brief historical information of Azerbaijan, followed by ancient and medieval maps prepared by foreign geographers and cartographers concerning Azerbaijan. These are supposed to represent the facts of Azerbaijan's ancient and historical past and appear on pages 33 to 61 of the Atlas.

The last thirteen pages (pp. 49 to 61) contain maps recently drawn by Azerbaijani cartographers as advertisements to present their supposedly millennia long history, all according to their own invented "facts". Naturally, all of these maps are actually extremely biased. As an example, it is sufficient to note that the names of the two real and ancient countries of the region, Armenia and Iran, are completely missing from them, while in international literature these countries have always been considered and presented among the ten oldest countries of the world.

The names of these two countries are usually removed from the maps and the entire area south of the Caucasus Mountains. On these maps even the central regions of Iran aaare marked as *Azerbaijan* or *Azeri khanates* and kingdoms. These fabricated facts come to confirm the fact that the Atlas is far from being a serious work.

Let us remember that until 1918, a territory called Azerbaijan did not exist north of the Arax River. Furthermore, the historians of the Atlas even call the Iranian royal families Azeri, naming almost half of the territory of Iran as "Azerbaijan", which in fact is the name borrowed in 1918 from the Iranian province of Azerbaijan, for the newborn country, located north of the Arax River.

Any cartographer, who has studied ancient and medieval maps in various libraries and museums of the world, could confirm without a doubt that among the tens of thousands of maps, made prior to 1918, here is the only one map, drawn in 1844 which shows the name Azerbaijan north of the Arax River. This could be found in the S.D.U.K. (Society of the Dissemination of Useful Knowledge) British atlas, published in London in 1844, where the name *Azerbaijan* could be seen written between Armenia and Georgia. This error, however, was rectified in the subsequent maps of the same atlas. Cartographers of Azerbaijan have made this unique and erroneous map their reference and ever-present evidence, which they all refer to and mention on every possible occasion.


Let us not forget that until the end of the 19th century, the present territory of Azerbaijan in the European, Islamic and Ottoman maps of the middle ages and later years, has been named *Arran* or *Shirvan*. Furthermore, in the maps of Tsarist Russia made between 1828 and 1918, when Russia invaded and divided the South Caucasus into administrative regions and *gubernias*, the name Azerbaijan is nowhere to be seen.

In all Ottoman maps of the nineteenth century, the northeastern part of their country is labelled *Ermanistan* or *Armenia*, and, as mentioned above, the territory of present-day Azerbaijan is named *Shirvan*. The toponym *Azerbaijan* is given only to the northwestern province of Iran, located south of the Arax River. See *Armenia, Azerbaijan and Turkey, Addressing Paradoxes in Culture, Geography and History*, 2020, Yerevan. (R. Galichian, 2020, London).

Before considering the chapter regarding historical maps of the Atlas, it is necessary to reveal the general approach of the authors of the volume towards maps, which could be assumed to be their general approach towards all history as well as historic maps. This subject is the map of the *Republic of Azerbaijan* in part two of the Atlas, pages 18 and 19, represented on Figure 01.

This map generally follows the 1970s maps of the USSR Military Staff. After 1936, three Azerbaijani enclaves appeared on the territory of Armenia, namely *Eskipara*, *Barkhudarlu* and then *Tigranashen-Kyarki* in 1939. On the map these three enclaves shown with highlighted borders on the map, inside the territory of Armenia, marked with green arrows.

